



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ»

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լ. Բաղրամյան

Ուսումնական հաստատություն՝ Մրգաշենի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....	3
Ընտանիքի հոգեբանություն.....	5
Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները.....	6
Ընտանեկան կոնֆլիկտները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա.....	10
Եզրակացություն.....	24
Օգտագործած գրականություն ցանկ	26

Ներածություն

«Զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիքներ»

Մուրացան

Ներկա

իրականության մեջ ժամանակակից արժեքների վերագնահատման պայմաններում նշանակալի փոփոխություն է կրում նաև ընտանիքը: Ընտանիքն ամուսնության վրա հիմնված մարդկանց փոքր խումբ է, ուր անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրացմամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ:

Ընտանիքն իրականացնում է մի շարք գործառույթներ՝ վերարտադրողական, տնտեսական, դաստիարակչական, սոցիալական հաղորդակցման, հանգստի կազմակերպման: Երեխան ծնվում, մեծանում, ձևավորվում է ընտանիքում: Նրա հետագա կյանքը ևս պայմանավորված է ընտանեկան դաստիարակությամբ: Ընտանիքի կազմը յուրաքանչյուր մարդու համար կենսական անհրաժեշտուն է: Ամառուսնությանը պատրաստ լինելն իր մեջ ներառում է տղամարդու և կնոջ փոխադարձ սերը, գիտելիքների մակարդակը, ընտանքի մասին ունեցած հայացքների և ամուսնական պարտականությունների միասնությունը, դաստիարակչական և տնտեսվարման կարողությունների առկայությունը:

Անհատի՝ իբրև հասարակության անդամ, ձևավորումն ընթանում է նախ և առաջ ընտանիքում, որն իր խորքում ազգային է՝ անկախ հավատամքից, հասարակության զարգացման աստիճանից և գաղափարախոսությունից: Ընտանիքի կազմը, նրա անդամների միջև փոխհարաբերությունների համակարգը տարբեր է՝ ժողովրդների և ժամանակի կտրվածքով: Այդ ամենն արտացոլվել է ժողովրդական բանահյուսության մեջ: Հայ ժողովրդի առածներում, ավանդապատումներում, ասույթներում, ինչու չէ նաև էպոսում շեշտված է հարգանքը մեծի նկատմամբ: Ընդգծվում է մոր դերն իբրև դաստիարակությունն իրագործողի և ընտանիքում ամենավեհ կերպարի: Կարևոր է նաև հոր դերը, որի նկատմամբ ընտանիքի մյուս անդամները մի առանձին պատկառանք են զգացել: Նա մասնակցում է երեխաների դաստիարակության

գործին և հիմնականում կարգուկանոն հաստատող հեղինակություն է: Իսկ երեխաները հայ ընտանիքների և հասարակության ամենամեծ հարստությունն են:

Սակայն փոխվել են ժամանակակից հայ ընտանիքին ներկայացվող պահանջները: Հարց է առաջանում. արդյո՞ք երիտասարդ ծնողները պատրաստ են համակողմանիորեն դաստիարակել երեխային, և բավարարու՞մ են նրանց հոգեբանամանկավարժական գիտելիքները: Նրանք գիտակցու՞մ են իրենց վրա դրված պատասխանատվության արժեքը, և, վերջապես, ո՞վ պետք է զբաղվի ծնողներին հոգեբանամանկավարժական գիտելիքների հաղորդմամբ, ծնողական դերի գիտակցման մանկավարժական ուղղորդմամբ: Սրանք հարցեր են, որոնք լուծման կարիք ունեն:

Ընտանիքի հոգեբանություն

«Ընտանեկան երջանկության բանալին բարությունն է,

անկեղծությունը, արձագանքելը:»

ԷՄԻԼ ԶՈԼԱ

Ընտանեկան դաստիարակությունն ամենօրյա մանկավարժություն է, անընդհատ աշխատանք: Ծնողների անձնական օրինակը և ընտանիքի անդամների փոխհարաբերությունները մեծ դեր են խաղում երեխայի վարքի, կենսափորձի ձևավորման ու հարստացման գործում: Երբ երեխան զուրկ է հոգեկան ջերմությունից, քնքշանքից, խնամքից, նա դառնում է անտարբեր մարդ:

Ընտանեկան դաստիարակության ոլորտում հաջողությունների հասնելու համար կարևոր դեր են խաղում ծնողների մանկավարժական կուլտուրան, հուզական ներաշխարհը, գիտակցությունը, վարքը, գիտելիքների, գործառական հմտությունների մակարդակը: Ինչպես նշում է Ի. Ս. Կոնը՝ «Յուրաքանչյուր ընտանիք հասարակությանը նախապատրաստում է ապագային և միաժամանակ յուրաքանչյուր ընտանիք ընդլայնում է գոյություն ունեցող հասարակությունը»: ¹

Ծնողների խելացի և նպատակաուղղված մանկավարժական վարքագիծը զուգորդվում է երեխաների վրա ընտանիքի ամենօրյա ապրելակերպի ուժեղ ազդեցությանը: Մեծ է հոր ու մոր անձնական օրինակի և հեղինակության, ազգակցական զգացմունքների, հուզական, մտերմական փոխհարաբերությունների դերը երեխայի դաստիարակության գործում: Ամերիկացի հայտնի հոգեբույժ և հոգեբան Սքոթ Պեկի «Կարգապահություն» տեսագործնական համակարգը սովորեցնում է հաղթահարել ընտանեկան կյանքի մի շարք հիմնախնդիրներ: Այդ համակարգն ընդգրկում է հետևյալ մեթոդիկաները.

- *Հաճելիի հետաձգումը*
- *Պատասխանատվության կրումը*
- *Իրականությանը նվիրված լինելը*

¹ Մարգարիտա Բադալյան, «Ծնողական դերի գիտակցման մանկավարժական ուղղորդումը», «Նախաշավիղ» գիտահետազոտական հանդես 2012

➤ *Հավասարակշռված վարքագիծը*

Ընտանեկան ջերմ մթնոլորտը պահպանելու համար երբեմն հարկ է լինում հաճելին հետաձգել՝ ի հաշիվ երեխաների հետ կապված առավել կարևոր հարցերի լուծման(տնային առաջադրանք կատարել, նախապատրաստել պարապմունքի): Շատ ծնողներ իրենց խնդիրների պատճառով մեղադրում են երեխաներին՝ ցանկանալով խուսափել պատասխանատվությունից:²

Նվիրված լինել իրականությանը մեթոդիկան օգնում է հաղթահարելու բացասական զգացմունքները, որոնք անխուսափելիորեն առաջանում են այս կամ այն կենսական խնդիրը լուծելիս: Օրինակ՝ շատ ծնողներ աշխատում են երեխաներին անտեղյակ պահել տվյալ պահին ընտանեկան դրվածքի, ֆինանսական վիճակի մասին: Նարանք ցանկանում են դրանով երեխային հեռու պահել ավելորդ տազնապներից և հոգսերից: Դրա հետևանքով երեխաները զուրկ են մնում ծնողական անկեղծ փոխհարաբերություններից:

Հավասարակշռությունը մարդուն հաղորդում է ճկունություն: Ընտանիքում հաջողության հասնելու համար պահանջվում է դրսևորել անհավանական ճկուն վարքագիծ: Սա անհատական առանձնահատկություն է, որը մարդուն մղում է նոր մտահաղացումների՝ անհրաժեշտության դեպքում նոր վճիռներ կայացնելու համար:

Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները

Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների և սովորույթների վրա: Դաստիարակությամբ նշանակալիորեն պայմանավորվում են այն փոփոխությունները, որոնք մարդը կրում է ծնվելու պահից մինչև հասուն դառնալը: Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հերազա զարգացմանը նպաստելն է՝ սկսած ծնված օրվանից: Վ. Հյուգոն ասում էր. «Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կնեղին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ, կազմում նրա անկապտելի

² Սեդրակ Ա. Սեդրակյան, Ընտանիքի հոգեբանություն, Երևան 2010

մասը»: Հետևապես դաստիարակության մեջ կարևորը դրա ճիշտ սկիզբն է: Միայն դաստիարակությունը միշտ արատներ է ծնում:

Հայաստանում դեռևս 4-րդ դարից կիրառվել են ընտանիքին, ամուսնությանը, ընտանեկան դաստիարակությանը վերաբերող ներքին և արտաքին կանոններ: Միևիթաբ Գոշը նշում էր, որ զավակների զանցանքների և հանցանքների համար ամենից առաջ պատասխանատու են ծնողները: Ներսես Շնորհալին խորհուրդ էր տալիս՝ երեխային դաստիարակել վաղ մանկությունից, խրատել, նրանց սրտի մեջ ներարկել բարության, ազնվության և մարդասիրության սերմեր: 19- րդ հայ լուսավորիչներն ու գրողները (Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Մ. Թաղաղյան, Ն. Զիրոյան, Ռ. Պատկանյան, Մ. Նալբանդյան, Բաֆֆի) աճող սերնդի կրթության և դաստիարակության գործում մեծ տեղ էին տալիս ընտանիքին: Նրանք ընդգծում էին ընտանիքի վճռորոշ դերը՝ երեխայի ապագայի ճիշտ կազմակերպման, նրա հակումների անկաշկանդ զարգացման առումով: Ընտանիքի ներգործությունն առավել նպաստավոր կարող է լինել, եթե այնտեղ հաստատված լինեն համերաշխ ու անշահախնդիր, անկեղծ ու ներդաշնակ հարաբերություններ:

Հանրահայտ ճշմարտություն է , որ երեխայի դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց և շնորհակալ ու հաճելի գործ է, որը չի կարելի ամբողջովին թողնել մանկապարտեզի և դպրոցի վրա:

Ժամանակակից գիտությունն ընդգծում է ընտանիքի առաջնային դերը երեխայի դաստիարակության գործում: Յուրաքանչյուր ընտանիք հասարակությանը նախապատրաստում է ապագային և միժամանակ յուրաքանչյուր ընտանիք ընդլայնում է գոյություն ունեցող հասարակությունը /Բ. Ս. Կոն/:

Գաղտնիք չէ, որ ազգ պահողն ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերենդեսերունդ պահպանողն ընտանիքն է: Ընտանիքում սկիզբ առած բարոյահոգեբանական մթնոլորտը նպաստավոր պայմաններ է ստեղծում անհատի, նրա անձնային որակների ձևավորման համար: Եթե անհատը մեծանում է բարոյապես ամուր, սիրո, համաձայնության և հարգանքի հիման վրա ստեղծված փոխհարաբերությունների առկայության պայմաններում,

բնական է, այդ ամենը իր դրոշմն է դնում նրա հոգու և սրտ վրա, և կերտվում է իսկական և լիարժեք մարդ:³

Դեռևս նախնադարյան հասարակության մեջ մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էր առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց: Նրանք հատուկ կերպով և հատուկ պայմաններում, քիչ թե շատ հետևողականորեն իրականացնում էին երեխաների զարգացումը:

Ընտանիքի հասարակության նյութական, հոգևոր, մշակութային և այլ արժեքներ փոխանցող օղակ է: Մի շարք հետազոտություններ ապացուցում են, որ սոցիալական ոչ մի այլ խումբ չի կարող իրագործել գործառույթների այն համակարգը, որն իրականացվում է ընտանիքի կողմից և ընտանիքի միջոցով:

Ամերիկացի հայտնի հոգեբույժ և հոգեբան Սքոթ Պեկի «Կարգուկանոն» տեսագործնական համակարգը սովորեցնում է հաղթահարել ընտանեկան կյանքի մի շարք խնդիրներ: Ըստ նրա՝ անահրաժեշտ է, որ մենք ինքներս սովորենք լինել կարգապահ և նույնը սովորեցնենք մեր երեխաներին:

Ընտանեկան դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին նախապայմանը համերաշխ ընտանիքն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում մեծանում են հանգիստ , հավասարակշռված, եռանդուն և կենսուրախ երեխաներ:

Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունը երեխաների հետ: Դա բարդ հարց է, որի լուծման ժամանկ առաջնակարգ նշանակություն է ստանում խստության և քնքշության «համամասնությունը»: Չի կարելի անընդհատ սիրել երեխային, անընդհատ գովասանքի արժանացնել, խրախուսել, կատարել նրա բոլոր պահանջները, և ընդհակառակը՝ անթույլատրելի է երեխային

³ Ադիբեկյան Ա., Հայ ընտանիքի բջջայնացման հեռանկարները, Հայ ընտանիքի ներկան և ապագան, Թեզիսներ գիտաժողովի զեկուցումների, Երևան 1994

հաճախակի պարսավանքի ենթարկելը, պատժելն ու մերժելը: Այդ ամենը պետք է լինի չափավորված ու դուրս չգա անհրաժեշտության սահմաններից:

Կարևոր է երեխայի անհատականության պահպանումը, իհարկե, չանտեսելով հասարակական վարքի կանոնները:

Ժամանակակից մանկավարժության մեջ առանձնանաում են ծնողական դաստիարակության երեք հիմնական ոճեր՝

- ինքնիշխան (ավտորիտար),
- հանդուրժողական,
- ժողովրդավարական:⁴

1. Այն ծնողները, որոնք հակված են ավտորիտար դաստիարակչական ոճին, սովորաբար նյարդային են, դժգոհ, իշխող և կոպիտ: Նրանք հազվադեպ են արտահայտում իրենց հույզերը: Նման ծնողի համար երեխային գրկելը, համբուրելը, գովասանքի խոսքեր ասելը ավելորդ ճոխություն է: Նրանց հարաբերություններում ծնողը միշտ ճիշտ է, իսկ երեխան միշտ պետք է ենթարկվող լինի: Այսպիսի դաստիարակչական մեթոդներ կիրառող ծնողների երեխաները սովորաբար լինում են վախկոտ, ջղային, դժբախտ: Նրանք հեշտությամբ են հասակակիցների ազդեցության տակ ընկնում: Դաստիարակչական նման ոճի կիրառման արդյունքում առողջ չեն ծնող-երեխա հարաբերությունները, և անխուսափելի են վեճերն ու կոնֆլիկտները:

2. Դաստիարակության հանդուրժողական ոճ որդեգրած ծնողները ջերմ են և հուզական իրենց երեխաների հանդեպ: Սակայն նրանք էլ սահմանափակ հսկողություն են իրականացնում և քիչ են մասնակցում նրանց կյանքին: Նրանք հեշտությամբ տեղի են տալիս երեխայի հաճույքներին: Նման ընտանիքներում մեծացող երեխաները լինում են անհանգիստ, հեշտությամբ իրենց կամքը թելադրում են ծնողներին և թերահավատությամբ վերաբերվում վերջիններին: Ժամանակակից ընտանիքներում այսօր հաճախ է հանդիպում այն երևույթը, երբ մայրը կամ հայրը գրեթե չեն մասնակցում երեխայի առօրյային: Իհարկե, նման դեպքերում օգնության են գալիս դայակը, տատիկը կամ որևէ կրթական համալիր, բայց արդյունքում երեխան մնում է անտեսված և ունենում է ինքնավստահության պակաս:

⁴ Արմինե Աշիկյան, «Ընտանիքը երեխայի անձի ձևավորման եվ զարգացման սոցիալ-մշակութային միջավայր», ԵՊՀ, «Զանգակ» 2016

3. Երրորդ ոճը ժողովրդավարականն է: Նման ծնողները լինում են ջերմ, հանգիստ, չափավոր են հսկողության մեջ, քաջալերում են երեխային, հաճախ զրուցում են նրա հետ և կողմնակից են երեխայի անկախությանը: Այս ծնողները հակված են ծնող-երեխա բարեհարմար հարաբերությունների ստեղծմանը, նրանց և զավակների միջև իշխում է փոխադարձ հարգանքը: Այդպիսի ընտանիքներում մեծացած երեխաները լինում են ինքնավստահ, ի վիճակի են պատասխանատվություն կրել, անկախ են և շիտակ:

Կարևոր է, որ ծնողները գիտակցեն՝ իրենցով է պայմանավորված, թե ապագայում ինչպիսին կդառնա իրենց երեխան՝ կլինի՞ երջանիկ, վստահ իր ուժերին, թե՞ անվստահ, ցածր ինքնագնահատականով:⁵

Բազմազան են ընտանիքում երեխաների դաստիարակության միջոցներն ու ուղիները: Ծնողներն իրենց երեխայի վարքի և բնավորության, հայացքների ու համոզմունքների ձևավորման վրա ամենից առաջ ազդում են իրենց սեփական օրինակով և հեղինակությամբ: Այսինքն՝ ծնողի լավ և ուսանելի օրինակը դաստիարակության հիմնական միջոցն է ընտանիքում: Նրա կողմից իրականացվող դաստիարակությունն ընտանիքում պետք է ունենա մանկավարժական ուղղվածություն: Դրա համար անհրաժեշտ է ծնողներին հենց սկզբից ներգրավել մանկապարտեզի մանկավարժական գործընթացների մեջ, մշակել մեթոդներ՝ նրանց մանկավարժական գիտելիքներ հաղորդելու և դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաներին ծանոթացնելու համար:

Ընտանեկան կոնֆլիկտները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա

Ընտանիքը որպես մարդկանց կայուն սոցիալական հանրություն, ունի բազմաթիվ տարիների պատմություն: Այն հասարակության տարր է հանդիսանում և կատարում է շատ կարևորագույն խնդիր՝ բնակչության թվի աճ, բազմացում: Դրա յուրահատկությունը կայանում է նրանում, որ մի քանի մարդ (մարդկանցխումբ), ամենասերտ փոխազդեցություն են ունենում երկարատեւ ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նմանատիպ ինտենսիվ փոխազդեցության համակարգում անհնար է գոյակցել առանց վեճերի,

⁵ Մեղա Մելիքյան, «Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները», «Նախաշավիղ» գիտահետազոտական հանդես 2012

կոնֆլիկտների և ճգնաժամերի :

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ:

Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա:

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում:

Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

Գոյություն ունի կոնֆլիկտ հասկացության մի քանի սահմանում:

Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության

բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:⁶

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են, և, ամենակարևորը, ընտանիքի հիմքում սերն է:

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձևավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ
2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդեցնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի); կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը,
3. Երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների եւ նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը
4. Միապաղաղության կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հազեցվածության փուլ, կամ քաղցի շրջան
5. Իվոլյուցիոն, կամ միայնակության զգացման փուլ: Այս շրջանը համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլյուցիոն շրջանի հետ: Կարող է ձևավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:⁷

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 80-85% ընտանիքներում առկա են

⁶ Տաթև գիտակրթական համալիր, «Հոգեբանությունը և կյանքը», «Զանգակ» հրատարակչություն 2012

⁷ Մերգել Արզումանյան, «Հոգեբանություն», Երևան 2002

կոնֆլիկտներ՝ մնացած 15-20%-ի մոտ նկատվում են տարբեր պատճառներով վեճերի առկայություն: ⁸

Ընտանիքը հիմնական դաստիարակչական ինստիտուտներից մեկն է:

Կապված կոնֆլիկտների հաճախականությունից, խորությունից և սրությունից, առանձնացնում են՝ ճգնաժամային, կոնֆլիկտային, պրոբլեմային, ներոտիկ ընտանիքներ (Վ.Տորոխտի):

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ընտանիք - հետաքրքրությունների և պահանջմունքների հակադրությունները կրում են սուր բնույթ և ներառում է ընտանիքի կենսագործունեության կարևորագույն ոլորտը: Ամուսինները զբաղեցնում են անհանդուրժողական, աններողամիտ և նույնիսկ թշնամական դիրք մեկը մյուսի նկատմամբ, չհամաձայնվելով ոչ մի զիջման: Ճգնաժամային ամուսնական միությունների թվին կարելի է դասել նաև այն ընտանիքները, որոնք քայքայվում են կամ գտնվում են փլուզման եզրին:

ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ընտանիք - ամուսինների միջև առկա են մշտական ոլորտներ, որոնցում իրենց հետաքրքրությունները բախվում են՝ առաջ բերելով ուժեղ և շարունակական բացասական հուզական վիճակներ: Սակայն ամուսնությունը կարող է պահպանվել ուրիշ գործոնների շնորհիվ, ինչպես նաև զիջումների եւ կոնֆլիկտների փոխզիջումային լուծումների միջոցով:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ընտանիք - սրան բնորոշ են դժվարությունների տևական գոյությունը, որն ընդունակ է զգալի հարված հասցնել ամուսնության կայունությանը: Օրինակ՝ բնակարանի բացակայությունը, ամուսիններից մեկի երկարատև հվանդությունը, ընտանիքը պահելու միջոցների բացակայությունը, հանցագործության համար երկարատև ժամանակով դատապարտվելը և մի շարք այլ խնդիրներ: Այսպիսի ընտանիքներում հավանական է փոխհարաբերությունների սրացում, ամուսիններից մեկի, կամ երկուսի մոտ էլ հոգեկան խանգարումների դրսևորում:


ՆԵՎՐՈՏԻԿ ընտանիք - այստեղ հիմնական դերը խաղում են այն գործոնների կուտակումը, որոնք հանգեցնում են հոգեբանական դժվարությունների: Ամուսինների մոտ նկատվում է բարձր տազնապայնություն, քնի խանգարում, ցանկացած առիթով հուզական դրսևորումներ, բարձր ագրեսիվություն և այլն: Ամուսինների կոնֆլիկտային վարքը կարող է դրսևորվել

⁸ Սեդրակ Ա. Սեդրակյան, Ընտանիքի հոգեբանություն, Երևան 2010

գաղտնի, քողարկված և բաց, ակնհայտ ձևերով. ցուցադրական - դեմոնստրատիվ լռելը, կտրուկ շարժումը (ժեստ), անհամաձայնություն նշանակող հայացքը, հարաբերություններում ընդգծված, շեշտված սառնությունը և բացահայտ խոսակցությունը տարբեր ձևերով եւ դրսևորումներով:

Կարևորելով ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների դերը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա՝ մենք, հարցաթերթային հարցման միջոցով, որին մասնակցել է ընդլայնված և բջջային ընտանիքների 40 ամուսնական զույգ, բացահայտեցինք կոնֆլիկտների առաջացման հաճախականությունը:

Հարցաթերթային հարցման արդյունքում ստացանք հետևյալ պատկերը.



Կոնֆլիկտների առաջացման հաճախականությունն ընդլայնված և բջջային ընտանիքներում

Փաստորեն ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտներն ավելի հաճախ են ծագում, քան բջջային ընտանիքներում:

Ընդլայնված է այն ընտանիքը, որտեղ բացի ամուսիններից և նրանց երեխաներից կան նաև այլ ազգականներ:

Ստորև ներկայացված են ուսումնասիրության արդյունքում բացահայտված ընտանեկան

կոնֆլիկտների տեսակներն ու դրանց հիմնական պատճառները:⁹

1. *Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև:* Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի ծանր բնավորությունը, սեռական անբավարարվածությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլն:

Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով: Առաջին ճգնաժամն ի հայտ է գալիս ամուսնության 1-ին տարում, հատկապես երբ ընտանիքում երեխա է ծնվում, երկրորդը՝ ամուսնության 3-7-րդ տարում, երրորդը՝ 17-25-րդ տարում:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով:

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյու քում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա երեխաների հետ:¹⁰

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են.

○ նրոտիկ ընտանիքներ, որտեղ զույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն

⁹ Ադիբեկյան Ա., Հայ ընտանիքի բջջայնացման հեռանկարները, Հայ ընտանիքի ներկան և ապագան, Թեզիսներ գիտաժողովի զեկուցումների, Երևան 1994

¹⁰ Ամիրջյան Ս., Խոհեր ընտանիքի էվոլյուցիան, Լհ., Երևան, 1967, ԼԼհ., Երևան, 1972:

◦ ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման

◦ պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում: Մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես ամուսնական գույգի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա:

Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Մա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ակնատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեւորամտիկ և այլ հիվանդություններ:

Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:¹¹

1. Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում: Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հասկացություն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև: Երեխաներն

¹¹ Տաթև գիտակրթական համալիր, «Հոգեբանությունը և կյանքը», «Զանգակ» հրատարակչություն 2012

այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են ճնշել իր ազատությունը: Մեծահասակները պետք է իմանան, որ երեք տարեկանի ճգնաժամն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ: Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջր պետ առաջանա:

Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում հայրեր և որդիներ խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել իդեալական ծնողի իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա իդեալական և իրական ծնողների միջև: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների: ¹²

2. Ծնող-երեխա հարաբերություններում: Այս տիպի կոնֆլիկտներն առաջանում են սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը,

¹² Տաթև Հարությունյան, «Ընտանեկան կոնֆլիկտները որպես սոցիալ-տնտեսական փոխազդեցության հետևանք», «Առավոտ» 2020

դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված: Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում, որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, դիտավորյալ կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները, քարով հարվածել բակի կատուններին և շներին: Գերադասում է խաղալ ագրեսիվ խաղալիքներով՝ զենք, ատրճանակ, նետ ու աղեղ և այլն: Այնուհետև երեխայի ագրեսիվ հակումները դրսևորվում են շրջապատող մարդ-կանց նկատմամբ: Երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում ճնշել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը:¹³

3. Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում: Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը: Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում «նորմալ» է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ:

Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ: Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի

¹³ Ս. Մարության, Ա. Դավլաքյան, «Նախադպրոցական մանկավարժություն», Երևան 2008

կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում:

Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ:

Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը:

Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:



Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անատողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

- *կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,*
- *ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,*
- *բարիորացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այն պես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:*

Ընտանիքը չափազանց կարևոր դեր է խաղում մարդու կյանքում, ծնված օրվանից մինչև մահ: Ծնողներից ստացած սիրո և փորձի շնորհիվ երեխան կառուցում է իր սեփական ընտանիքը: Ընտանիքը ոչ միայն այն միջավայրն է, որտեղ մարդը ստանում է սեր, ուշադրություն, հարգանք, դաստիարակություն, նաև աջակցություն և հմտություններ, այլ միջավայր մտնելու, ընտելանալու և համապատասխանորեն դրսևորվելու համար: Եվ վերջապես, ընտանիքը և ծնողները այն կարևոր աղբյուրն են, որտեղից անհատը հոգևոր դաստիարակության փորձն է ստանում:¹⁴

Հոգեբան Կարինե նալչաջյանը նորաստեղծ հայ ընտանիքի համար ամենալուրջ խնդիրներից մեկը համարում է «հեռվացած» ընտանիքների խնդիրը, երբ հայրը մեկնում է արտագնա աշխատանքի: Նրա խոսքով, այդ հեռավորությունը բացասական է ազդում

¹⁴ Վ. Միրզոյան, «Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները եվ դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա», Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ 2014

ինչպես ամուսինների, այնպես էլ երեխայի ու նրա հոգեկան զարգացման վրա, նույնիսկ եթե կա էմոցիոնալ կապվածություն ու որոշակի շփում:

Երեխայի մոտ դա կարող է արտահայտվել թե՛ բարդությունների ի հայտ գալով, թե՛ հակառակ սեռի հետ շփման խնդիրներով ու ընտանիք ստեղծելու դժվարությամբ: «Երեխային միայնակ մեծացնող մայրերը, իհարկե, հերոսական կերպարներ են, սակայն հոր ֆունկցիան անփոխարինելի է, նրա բացակայությունը ոչ ոք լիարժեք չի կարող լրացնել», – ասում է Նալչաջյանը: Նրա խոսքով, ծնողների հարաբերությունները երեխայի համար օրինակներ են. եթե մոդելներն աչքի առաջ խաթարված են, կամ առավել ևս՝ չկան, մարդն իր անձնական կյանքը ստեղծելիս կարող է շատ լուրջ դժվարությունների առաջ կանգնել:¹⁵

Հոգեբան Իրինա Ծատուրյանը, հիմնվելով սեփական հետազոտությունների վրա, նշում է, որ հայկական ավանդական ընտանիքի մոդելը այսօր փոխվել է: Նրա խոսքով Արցախյան պատերազմը, սոցիալական վիճակը, աշխարհում տեղի ունեցած փոփոխություններն հայկական ընտանիքների վրա բացասական ազդեցություն են ունեցել: Պատերազմում ունեցանք զոհեր, եղան նաև վիրավորված, հաշմանդամություն ձեռք բերած տղամարդիկ, որն իր հետ բերեց այն վիճակը, երբ կինը նույնպես դարձավ ընտանիքի կերակրող: Սա բերեց իր հետ նոր խնդիրներ: Իսկ պատերազմական այս փուլում, այսպես կոչված հետպատերազմական շրջանում, լարված հասարակական-քաղաքական մթնոլորտում այս օրերին շատ ընտանիքներում է նկատվում լարվածություն: Լարվածության և նյարդային այս ֆոնին հաճախ ընտանիքի անդամների միջև վեճեր են գրանցվում ամենասովորական առիթներով: Ընտանիքի որևէ անդամի մեկ հարց ավել տալը հաճախ կարող է պատճառ դառնալ մեծ վիճաբանության:

Իսկ, հոգեբան Կարինե Նալչաջյանը նշում է, որ մեր ընտանիքներում կապվածությունը ծնողի ու երեխայի միջև երբեմն այնքան ուժեղ է լինում, որ հոգեբանական տեսակետից բացասաբար կարող է ազդել: Ի տարբերություն եվրոպական ընտանիքների՝ հայ երեխան ավելի ուշ է հեռանում ծնողից, թուլացնում կապվածությունը: Ինչպես ինամքի պակասը, այնպես էլ ավելցուկն է վնասակար. ծնողական դերը ճիշտ կատարելը որոշակի

¹⁵ Կարինե Նալչաջյան, «Հոգեբանության ընդհանուր հիմունքներ», Երևան «Լույս» 1991

իմաստություն է պահանջում: Դրա հետ մեկտեղ նա ընտանիքի մոդելների մեջ դրական փոփոխություններ է տեսնում: Օրինակ, ծնողները հիմա ավելի հեշտությամբ են ընդունում նորապսակների՝ առանձին ապրելու որոշումը: Նորաստեղծ ընտանիքներն ավելի նախաձեռնող ու ակտիվ են, քան ավագ սերունդը, դա պայմանավորված է նաև ժամանակներով: Նաև սերտացել է շփումն ու փոխազդեցությունը արտաքին աշխարհի, այլ ազգերի ու մշակույթների միջև:

Այսպիսով՝ *«Երեխաները երկրի բնական ծաղիկներն են, իսկ այդ ծաղիկներն առաջին հերթին աճեցնում են ընտանիքում ծնողները»*, - այդպես է արտահայտել իր միտքը Ա. Մ. Գորկին:

Իսկ մենք ավելացնենք, որ երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակապալաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական

նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության և փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է:

Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը:¹⁶

16 Պետրովսկի Ա.Վ. «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», Երևան «Լույս» 1997

Եզրակացություն

Մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ, և առաջացած կոնֆլիկտները վերջնական լուծում չեն ունենա: Դպրոցը երեխային տալիս է գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են: Այսօր ծնողները ցանկություն ունեն ձեռք բերելու մանկավարժական գիտելիքներ: Անհրաժեշտություն է համարվում տիրապետել երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններին, ինչպես նաև հոգեկանի զարգացման օրինաչափություններին: Հաշվի առնելով ընտանեկան դաստիարակության առկա վիճակն ու դաստիարակության ժամանակակից մոտեցումները՝ հարկավոր է մշակել նախադպրոցականի ընտանեկան դաստիարակության ուղեցույց (հրահանգներ, խորհուրդներ, մեթոդական ցուցումներ), որտեղ կներառվեն դաստիարակության ժամանակակից մոտեցումներից բխող հրահանգներ, ինչպես նաև բազմաբովանդակ խորհուրդներ ծնողներին: Անհրաժեշտ է կրթական հաստատություններում պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ, ծնողական համաժողով, որի ընթացքում կարելի է անհրաժեշտ տեղեկատվություն փոխանցել երեխաների ծնողներին: Յուրաքանչյուր հանդիպում պետք է ավարտել ծնողներին հուզող հարցերին պատասխանելով: Հարկավոր է ամրագրել այն հիմնախնդիրները, որոնք ունեն ընդհանրական բնույթ և ենթադրում են լրացուցիչ ուսումնասիրություններ: Անհրաժեշտ է կազմակերպել ծնողական թեմատիկ գիտաժողովներ, սեմինարներ և կլոր սեղաններ՝ դաստիարակության առկա խնդիրների շուրջ: Այդ հավաքներին պետք է մասնակցեն համապատասխան մասնագետներ, նախադպրոցական կրթական հաստատությունների աշխատակիցներ և ծնողներ: Քննարկման առարկա կարող են լինել հետևյալ թեմաները՝ «Հայրիկների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործընթացում», «Ընտանիքի անդամների փոխհարաբերությունների ներգործությունը երեխայի դաստիարակության վրա», «Ընտանիքում միայնակ մեծացող երեխաների

դաստիարակության հոգեբանական առանձնահատկությունները», «Վեց տարեկանը դպրոցում», «Նախադպրոցականի սեռադերային սոցիալականացման խնդիրները», «Ի՞նչ է աղանդը», «Արտագաղթը և ես» և այլն:

Եթե բոլոր ընտանիքներում ծնող-երեխա փոխհարաբերությունը կառուցվի սիրո, համերաշխության ու ներողամտության, միմյանց զիջելու և դիմացինի կարծիքը հաշվի առնելու սկզբունքով, ապա մեր երկրում երեխաները կլինեն զարգացած ու մարդասեր: Եթե ընտանեկան դաստիարակության հիմունքները կառուցված լինեն ազգային ավանդույթների և ժամանակակից կրթական մանկավարժության պահանջների ոգով, ապա հայ ընտանիքը կպահպանի իր ազգային դիմագիծը, և երեխաները կլինեն հայրենասեր: Նման սերունդները կապահովեն ամուր ընտանիք, իսկ կայուն ու ամուր ընտանիքն ազգի գոյապահպանման հիմքն է:

Օգտագործած գրականություն ցանկ

1. «Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխաների վրա և հնարավոր լուծումները», հեղինակ՝ Տիգրան Ենգիբարյան
2. Տաթև գիտակրթական համալիր, «Հոգեբանությունը և կյանքը», «Զանգակ» հրատարակչություն 2012
3. Ադիբեկյան Ա., Հայ ընտանիքի բջջայնացման հեռանկարները, Հայ ընտանիքի ներկան և ապագան, Թեզիսներ գիտաժողովի զեկուցումների, Երևան 1994
4. «Նախաշավիդ» գիտահետազոտական հանդես 2012
5. Խուդոյան Ս.Ս.- Անձի զարգացման ճգնաժամային տարիքները
6. Նալչաջյան Ա.Ա.- Ընդհանուր հոգեբանության հիմունքներ
7. Պետրովսկի Ա.Վ. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն
8. Պետրովսկի Ա. Վ.- Ընդհանուր հոգեբանություն

Օգտագործված կայքէջեր

1. <https://ache.am/arm/55/Ընտանեկան-կոնֆլիկտները-որպես-սոցիալ-տնտեսական-փոխազդեցության-հետեվանք>
2. <https://www.aravot.am/2020/11/27/1155232/>
3. <https://www.doctors.am/family-psychology>
4. <https://gohargabrielyan.wordpress.com/2016/02/01/ընտանիքի-հոգեբանություն/>
5. <http://www.hogeban.info/ընտանիքի-հոգեբանություն.php>

